I

Հայոց ցեղասպանության
100-րդ տարելից

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՎԵՐՈՒՄԸ ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ (XI – XX ԴԴ.)

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ

Հայ մշակույթի կարևորագույն բնագավառներից ճարտարապետությունը դարերի ընթացքում մեծապես տուժել է Հայաստան ներխուժած օտար նվաճողներից (պարսիկներ, արաբներ, թաթար-մոնղոլներ, թուրքեր), որոնք մոլեռանդորեն հիմնականում ավերել են երկրի վանքերն ու եկեղեցիները, որոնցից շատերը հանդիսանում են համաքրիստոնեական մշակույթի գլուխգործոցներ: Եվ ամենամեծ վնասը XI դարից մինչև այսօր հասցրել են թուրքերը (հանձինս սելջուկների, Օսմանյան կայսրության, XX դ. ՝ Թուրքական Հանրապետության, ապա 1936 թ. «ադրբեջանցի» վերանվանված անդրկովկասյան թուրքերի):

Հայ պատմիչներն ու ժամանակագիրները, XI դ. սկսած, հաղորդել են արևելքից Անդրկովկաս և Փոքր Ասիա ներխուժած ու նվաճած տարածքներում մշտական բնակություն հաստատած թուրքական տարրի անհանդուրժողականության մասին երկրի տերերի, տվյալ դեպքում՝ հայերի մշակութային արժեքների (ճարտարապետական կառույցների, արվեստի գործերի, ձեռագրերի) նկատմամբ՝ ոչնչացնելով սկզբում դրանք տարերայնորեն, ապա նպատակադրված ու հետևողականորեն:

Այդ մասին առաջին տեղեկությունները հանդիպում են XII դ. պատմիչ Սամուել Անեցու և նրա «Պատմությունը» մինչև XVII դ. շարունակողների մոտ: Սելջուկյան սուլթան Ալփասլանի կողմից 1064 թ. Անին գրավելու և կատարած ավերածությունների մասին պատմիչը գրում է. «…եկն Ալփասլան և եառ զմայրաքաղաքն Անի, և յոյժ կործանեաց զեկեղեցիս»[1]:

Պատմիչ Կիրակոս Գանձակեցու մոտ պահպանվել է տեղեկություն Ս. Թադեի վանքի՝ թուրքերի ավերած գավթի վերականգնման մասին. «ՈՂՋ էր թուականս Հայոց (1247) առաքինի կաթողիկոսն Կոստանդին… առաքե շրջաբերական նամակ շիրմի առաքելոյն Թադեոսի տալ նմա վիճակ… և ոսկի յոլով ի շինութիւն

[1] *Սամուել Անեցի. Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1898, էջ 107:*

գաւթին, զոր շիներ վարդապետն Յովսեփ, յետ ավերածոյն՝ որ ի թուրքաց»[2]:

Սամուել Անեցու «Պատմության» շարունակության մեջ հիշատակվում է այն մասին, թե ինչպես Կիլիկիայում «ՌՄՀԴ (1274) թուրքն այրեցին զհռչակավոր մենաստան ի Սկևռան»[3]:

Թուրքերի կողմից հայկական եկեղեցիների և վանքերի իրականացված ավերումների մասին հատկապես տեղեկությունները բազմաթիվ են ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում և XIII – XVIII դդ. Մանր ժամանակագրություններում: XIV դ. ժամանակագրություններից մեկում նշվում է. «Ի թվին ՊԼԳ (1384) Բուրհանատին դատին էսպան զտէրն Սեբաստիոյ և նստաւ յաթոռ իշխանութեան: Եւ զՍտեփանոս արհեպիսկոպոսն Սեբաստիւ նահատակեց, և սուրբ Քառասնից վանքն քակեց, և բազում չարիս գործեց»[4]: XV դ. Վասպուրականում գրված հիշատակարանը հայտնում է. «Գրեցաւ ի թվ ՊԿ (1411): Յայսմ ամի այրեցին զմեր ժամատունս Ղարա-Ուսուֆն»[5]:

Ուշագրավ է կրոնական անհանդուրժողականության հետևյալ փաստը. «Մկրտիչ Նաղաշը… ի ՊՁ (1431) թուին նստի յաթոռ հայրապետական ի յԱմիթ շահաստանի… ի ՊՁԸ (1439) թուին սկսանի վերանորոգել… զհրաշափառ Կաթողիկեն… յանուն սրբոյն Թեոդորոսի զինաւորին… եւ աւարտեալ կատարեաց զմբեթայարկ յօրինուածով, անասելի եւ անպատմելի գեղեցկութեամբ, զի գլուխ զմբեթին բարձր էր քան մինարայիցն…

Զոր տեսեալ… ազգն մահմեդականք… իսկոյն իսկ դեսպան և հրովարտակս առաքեցին առ սուլթան Համզեն՝ քակել զամենագով սուրբ Կաթողիկեն… Եւ ետուն զանձս բազում եւ ոչ կարացին ազատել»[6]:

XV դ. «…ի գեւղս, որ կոչի Տաւթայ և Հրեշտակապետին անուն եկեղեցին… տաճիկք (թուրքերը) քակել էին և իջուցել զքարինսն…»[7]: Իսկ 1483 թ. Վասպուրականում «…տաճկունք քակեցին Սքանչելագործն (վանքը)»[8]:

Ավերումների մասին շատ տեղեկություններ են պահպանվել XVI–XVIII դարերից: XVI դարում «Ի թվին ՋՂԲ (1543) Թոխաթու եկեղեցին աւերեցին թուրք ազգն…»[9]: «Ի թվին ՌԺԴ (1565)… ի սոյն ամի չարացան Սնաստու (Սեբաս-

---

[2] Կիրակոս Գանձակեցի. Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 311:

[3] Սամուել Անեցի. նշվ. աշխ., էջ 162:

[4] Մանր ժամանակագրություններ, XIII – XVIII դդ., հ. 1, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 167:

[5] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401–1450), կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 129:

[6] Նույն տեղում, էջ 627– 628:

[7] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481–1500 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 447:

[8] Նույն տեղում, էջ 40:

[9] Մանր ժամանակագրություններ, XIII – XVIII դդ., հ. 1, էջ 157:

տիա) տաճկրնին և զՍեաստա Լուսավորչին ժամտունն քակեցին»[10]: «Թվին ՌԽԱ (1592) տաճիկն առին զԼուսավորիչ եկեղեցին ի Սեաստ և արարին ուրբաթ մզկիթ և զԱստվածածին տաճարն, որ ի մօտն կայր՝ քակեցին եւ ի տեղն մինարայ շինեցին: Զգերեզմանին քակեցին և զոսկերն ի դուրս լցին…»[11]:

XVI դ. թուրքերի կողմից Երևանը գրավելուց հետո քաղաքի եկեղեցիները քանդելու մասին հիշատակվում է Յոհաննեսիկ վարդապետի «Համառոտ պատմութեան» մեջ, որը որպես հավելված տպագրված է աշխատության մեջ. «Ի ՌԼԲ (1583)… հրաման եղն ի Մուրատ Խոնդկեարէն զորապետաց և զորաց իւրոց՝ ելանել ի վերայ Երևանայ և առնուլ զնա: Եւ եկին իսկ և աւերեցին և բազում եկեղեցիք քակեալ՝ զքարինս ի շինումս բերդին տանէին…»[12]:

XVII դ. Թոխաթում թուրքերը «…թուին ՌՃԳ (1654) Ղայամահալի եկեղեցին և զսուրբ Աննա քակեցին: Թուին ՌՃԸ (1659) սուրբ Աննա նորոգեցին: Չարդպլեու փաշան քակեց: Ի թուին Հայոց ՌՃԿԹ (1720) ամին կրկին նորոգեալ շինեցան սուրբ Աննա վանքն… Թուին ՌՃՀԲ (1723) ֆերման բերին զսուրբ Քառասնից եկեղեցին նորոգելու, առին հրաման և նորոգեցին. մինչև ոչ թամամիլն ժողովեցան Թոխաթու այլազգիքն ամենայն, գրոհ տուալ հասին ի սուրբ Աննա վանքն զամենայն ինչ աւար տուին և շուտով ոչ քակիլն այրեցին զամենայն շինուածն…»[13]:

1771 թ. հրդեհեցին Ղալաթիայի (Ստամբուլ) Ս. Լուսավորիչ եկեղեցին[14]: Իսկ «Ի թուին Հայոց ՌՄԽԳ (1794)-ին ապրիլի ԺԷ (17)-ին եղն անտանելի վիշտ Պուռսայ (Բուրսա) քաղաքն ազգիս Հայոց, զի մինչ սկսեալ էին շինել անդ եղեալ զեկեղեցին և մերձ ի վախճանին, չարացեալ տաճկաց եկեալ այրեցին զնորաշեն եկեղեցին և զանօթս աւար առին»[15]:

Անշուշտ, միջնադարում հայկական շինարարական արվեստի աշխարհիկ և հոգևոր հուշարձանների ավերումը նշված օրինակներից ավելին է եղել՝ ոչ բոլորն են հիշատակվել ժամանակագիրների կողմից: Սակայն, դժբախտաբար, սա հանդիսացավ XIX դ. 90-ական թվականների հայոց առաջին եղեռնի և 1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ զանգվածային կոտորածներին զուգակցված ու տասնամյակներ շարունակված հայ ճարտարապետության և արվեստի հուշարձանների նույնպես զանգվածային ոչնչացման սոսկ նախապատմություն:

1894–96 թթ. Օսմանյան Թուրքիայի տարածքում արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի նախաձեռնած և իրագործած հայ բնակչության կոտորածները, որոնց

---

[10] Նույն տեղում, էջ 172:

[11] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, էջ 179:

[12] Ս ա մ ո ւ ե լ Ա ն ե ց ի. նշվ. աշխ., էջ 191:

[13] Մանր ժամանակագրություններ, XIII – XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 526:

[14] Դիվան հայոց պատմության, գիրք Ժ: Մանր մատենագիրք, հրատարակեց Գյուտ Աղանյանց, Թիֆլիս, 1912, էջ 377:

[15] Մանր ժամանակագրություններ, XIII – XVIII դդ., հ. 1, էջ 344:

հետևանքով սպանվեց երկու հարյուր հազարից ավել մարդ, զուգակցվեց հարյուրավոր վանքերի ու եկեղեցիների ավերումով: Մեծ եղեռնի ականատես ֆրանսիացի Անրի Բարբին գրում է, որ մոտ 300.000 հայ զոհվեց Աբդուլ Համիդի դահիճների կողմից, 2.500 բնակավայրեր ավերվեցին և 568 եկեղեցիներ ու վանքեր քանդվեցին կամ մզկիթի վերածվեցին[16]:

Ընդամենը տասնհինգ տարի անց՝ 1909 թ., տեղի ունեցան Կիլիկիայի կոտորածները, երբ 30.000 հայ սպանվեց երիտթուրքերի մեղսակցությամբ, հրկիզվեցին ու ավերվեցին Ադանայի, Տարսոնի, Սիսի, Հաջնի և այլ վայրերի բոլոր եկեղեցիներն ու վանքերը[17]:

Ըստ 1904 թ. Կ. Պոլսում հրատարակված պաշտոնական ցուցակի՝ Օսմանյան կայսրության տարածքում եղել են (կանգուն վիճակում) հայկական 228 վանք և 1958 եկեղեցի[18]:

1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ և դրան հաջորդած մի քանի տարվա ընթացքում կողոպտվեցին, հրկիզվեցին, ավերվեցին գրեթե բոլոր վանքերն ու եկեղեցիները, այրվեցին դրանց գրապահոցները՝ հարյուրավոր մագաղաթե ձեռագրերով և հնատիպ գրքերով, հափշտակվեցին եկեղեցական իրերը, այսինքն՝ ոչնչացվեցին դարերի ընթացքում ստեղծված, հավաքված հայ մշակույթի անթիվ գանձերը, որոնք համամարդկային մշակույթի կարևոր բաղկացուցիչ մասն էին:

1919 թ. կազմված պաշտոնական ցուցակի համաձայն, մշակութային եղեռնի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ ավերվել են հայկական 229 վանք և 1860 եկեղեցի[19]:

1915 թ. Մեծ եղեռնը դարձավ հայ ժողովրդի ողջ պատմության մեծագույն աղետը՝ իր երեք կարևորագույն և անփոխարինելի կորուստներով՝ ա) մեկուկես միլիոն զոհ, բ) պատմական Հայաստանի շուրջ երեք հարյուր հազար քառ. կմ տարածության կորուստ, գ) ազգային դարավոր մշակույթի անթիվ ու անգին ժառանգության կորուստ[20]:

Նյութական մշակույթի ոչնչացումը, առաջին հերթին ճարտարապետական կառույցների՝ տվյալ դեպքում հայկական վանքերի ու եկեղեցիների հիմնահատակ ավերումը նպատակ ուներ Թուրքիային անցած պատմական Հայաստանի հայաթափված ողջ տարածքից ջնջել հայկական ամեն մի հետք: Այս ծրագրի իրագործմանը գումարվեց նաև հետևյալը. Եղեռնից հետո Արևմտյան Հայաստանի

---

[16] *Ա ն ր ի Բ ա ր բ ի. Սարսափի երկրի մեջ, թարգմ. Մ. Շաշտանձյան, Կ. Պոլիս, 1919, էջ 7:*

[17] *Տ. Յ ա ր տ ը մ յ ա ն. Հայաստանի վանքերուն և եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894–1896 և 1915–1925 տարիներուն, Վենետիկ, Ս. Ղազար, 2001, էջ 30:*

[18] *Նույն տեղում, էջ 44:*

[19] *1915–1965: Հուշամատյան Մեծ եղեռնի: Հրատարակություն □Զարթոնք□ օրաթերթի, Բեյրութ, 1965, էջ 1025:*

[20] *Տ. Յ ա ր տ ը մ յ ա ն. նշվ աշխ., էջ 14–15:*

թուրք և քուրդ բնակչությունը, հետևելով իշխանությունների միտումնավոր տարածած այն քարոզչությանը, թե տեղահանված ու բնաջնջված հայությունը սովորություն է ունեցել իր գանձերը թաքցնել տների կամ եկեղեցիների պատերում, սկսել են փորփրել այդ լքված կառույցները՝ սկիզբ դնելով դեռևս կանգուն մնացած շինությունների ավերմանը[21]:

Եթե քեմալական Թուրքիայում 1920–30-ական թվականներին հայկական հուշարձանները պետականորեն չէին ոչնչացվում, ապա 1950–60-ական թվականներին վերստին սկսվում է դրանց ծրագրված ոչնչացումը: Պայթեցումներով ավերվում են ինչպես բնակավայրերում դեռևս կանգուն տաճարները, այնպես էլ քաղաքներից ու ավաններից հեռու գտնվող վանքային համալիրները:

1965 թ. սկսած, Մեծ եղեռնի 50-ամյակից հետո, երբ Խորհրդային Հայաստանում, ժողովրդի ճնշմամբ, պարտադրված լռությունից հետո սկսվեց գրվել և խոսվել այդ մեծ աղետի մասին ու Երևանում հուշարձան կառուցվեց, նաև բողոք հղվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ Արևմտյան Հայաստանի հայկական ճարտարապետական հուշարձանների ավերման կապակցությամբ (որին գումարվեց և սփյուռքի հայության բողոքը):

1960-ական թվականների կեսից արևմտաեվրոպական գիտնականները (առաջին հերթին՝ Ֆրանսիայից և Իտալիայից) գիտարշավներ են սկսում Արևմտյան Հայաստան՝ ուսումնասիրելով ու աշխարհի գիտական հանրությանը ներկայացնելով հայկական ճարտարապետական հուշարձանները, դրանց աղետալի վիճակը, ընդգծելով այդ կոթողների համամարդկային արժեքն ու նշանակությունը: Դա ստիպում է ՅՈՒՆԵՍԿՕ-ին արձագանքել և 1974 թ., հիմնվելով իր ունեցած սահմանափակ աղբյուրների վրա, պաշտոնապես հայտարարություն կատարել Թուրքիայի տարածքի հայկական հուշարձանների վերաբերյալ:

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ 1915 թ. Արևմտյան Հայաստանում կանգուն 913 վանքերից ու եկեղեցիներից ավերվել ու ոչնչացել են 464-ը, 252-ը փլատակ են, իսկ 197-ը շուտափույթ նորոգման կարիք ունեն:

Այս տվյալները չափազանց թերի են, որովհետև, ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1912 թ. ներկայացված պաշտոնական ցուցակի, Արևմտյան Հայաստանում կանգուն ու գործող են եղել 2200 եկեղեցի ու վանք, հետևաբար, Մեծ եղեռնից մինչև 1974 թ. ավերվել են դրանցից 2003-ը[22]:

Հայկական հուշարձանների ավերումը Թուրքիայի հանրապետության տարածքում շարունակվեց նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայտարարությունից հետո: Այդ գործընթացին մասնակցեց նաև թուրքական բանակը՝ դեռևս կանգուն մի շարք եկեղեցիներ ու վանքային համալիրներ որպես թիրախ ծառայեցին՝ զինավարժութ-

---

[21] *Շ. Հ ո վ ս ե փ յ ա ն. Մշակութային եղեռն, Թեհրան, 2006, էջ 1:*

[22] *Նույն տեղում, էջ 4:*

յունների ժամանակ հրետակոծության համար:

Հնարավոր չէ մեկ-մեկ թվարկել Արևմտյան Հայաստանի ոչնչացված հայկական բոլոր ճարտարապետական հուշարձանները՝ դրանք անհամար են: Ավերվեցին ճարտարապետության պատմության հանգուցային շատ հուշարձաններ:

Տեկորի Ս. Սարգիս վկայարանը (478–490 թթ.) վաղագույն թվագրված քառամույթ գմբեթավոր եկեղեցին է քրիստոնեական ճարտարապետությունում: Սակայն XX դ. սկզբին կանգուն և գործող այս բացառիկ հուշարձանից այսօր մնացել են պատերի կրաբետոնի միջուկի մի քանի կույտեր, իսկ սրբատաշ, վաղմիջնադարյան արվեստի բացառիկ քանդակներով քարերը կարելի է տեսնել մոտակա թուրքա-քրդաբնակ գյուղի տների և գոմերի պատերի շարվածքում: Տեկորի տաճարը չափազանց արժեքավոր էր հայ մշակույթի համար և նրանով, որ հուշարձանի շինարարական արձանագրությունը, փորագրված Մեսրոպ Մաշտոցի մահվանից մոտ երեք տասնամյակ հետո, մեզ հասած հայերեն ամենահին գրությունն էր և հավաստի պատկերացում էր տալիս մեսրոպաստեղծ այբուբենի տառաձևերի մասին:

Բագավանի Ս. Հովհաննես եկեղեցին (631–639 թթ., ճարտարապետ Իսրայել Գոռաղճեցի) հայկական ամենախոշոր գմբեթավոր եկեղեցիներից էր, կանգուն ու գործող: Պայթեցվեց 1950-ական թվականներին: Վերացված են նույնիսկ ավերակները:

Բագարանի Ս. Թեոդորոս եկեղեցին (624–631 թթ.) իր հորինվածքով հարում է Էջմիածնի Մայր տաճարի քառախորան, քառամույթ գմբեթավոր տիպին: Էջմիածին-Բագարան եկեղեցական շենքի տիպը Բյուզանդիայի միջոցով Հայաստանից անցավ Արևմտյան Եվրոպա և IX– XII դդ. կիրառվեց Ֆրանսիայում, Իտալիայում, Հունաստանում: Բագարանի եկեղեցին պայթեցվեց 1960-ական թվականներին:

Ավերվեցին և այսօր դրանց հետքն էլ չի երևում դեռևս XX դ. սկզբին կանգուն ու գործող վաղմիջնադարյան եռախորան գմբեթավոր Ագարակի Ս. Ստեփանոս Նախավկա, քառախորան գմբեթավոր Ալամանի Ս. Անանիա (637 թ.) եկեղեցիները և շատ ուրիշները: Քառամույթ գմբեթավոր հորինվածքով Մրենի հռչակավոր Կաթողիկեն (613–639 թթ.) անխնամ մնալու և պատերի ստորին մասերի քարերը շրջակա գյուղերի բնակիչների կողմից պոկվելու պատճառով այսօր վթարային վիճակում է՝ վերջերս փլվեց հարավային ճակատը:

Պայթեցվել է Սմբատ Ա Բագրատունի արքայի (890–914 թթ.) կառուցած Շիրակավանի Ս. Ամենափրկիչ խոշոր եկեղեցին, որը ժամանակին եղել է Հայ առաքելական եկեղեցու Մայր տաճար:

Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր վանքային համալիրները, որոնք մշակութային խոշոր կենտրոններ էին, իսկ շատերը՝ անսամբլային ճարտարապետության գլուխգործոցներ, ավերվեցին ռմբակոծություններով, պայթեցումներով, օգ-

տագործվեցին որպես «քարհանք» մոտակա թրքաբնակ և քրդաբնակ գյուղերի բնակիչների համար[23]:

Հայաստանի Հանրապետության սահմանի դեմ-դիմաց՝ Անիի մոտ՝ Ախուրյանի աջ ափին, X դ. հիմնված Հոռոմոսի վանքը, ծաղկում ապրած XIII դ., միջնադարյան նշանավոր կրոնական և մշակութային կենտրոն էր: Համալիրի գլխավոր՝ Ս. Հովհաննես եկեղեցու գավթի (1038 թ.) քառասյուն կենտրոնակազմ հորինվածքը դարձավ XI–XIII դդ. հայկական գավիթների ու ժամատների հիմնական տիպը: Համալիրը այսօր լրիվ ավերակ է, անհետացել են այստեղ թաղված Բագրատունի արքաների գերեզմանները:

Անի-Շիրակի ճարտարապետական ստեղծագործական դպրոցի լավագույն համալիր Խծկոնքի վանքի X– XI դդ. հինգ եկեղեցիներից չորսը պայթեցվեցին 1962 թ. թուրքական իշխանությունների կողմից: Համալիրից մնացել է միայն Ս. Սարգիս եկեղեցին (1027 թ.)՝ վթարային վիճակում:

Շիրակում ավերակ է դարձել XI դ. նշանավոր Բագնայրի վանքի համալիրը: Ծրագրված ավերվել են հատկապես Վասպուրականի և Տարոնի վանքերը:

Նշանավոր Նարեկավանքը (X – XI դդ.) հիմնովին ավերվել է 1950-ական թվականներին: Գլխավոր՝ Ս. Սանդուխտ խոշոր, գմբեթավոր եկեղեցու տեղում մզկիթ են կառուցել և համալիրի տարածքում գյուղ հիմնել: Վանքից այժմ ոչինչ չի պահպանվել, անհետացել է Գրիգոր Նարեկացու դամբարանը:

Տարոնում կրաբետոնի զանգվածներ են մնացել Գրիգոր Լուսավորչի հիմնադրած Մշո Ս. Կարապետ և Ս. Առաքելոց վանքերից: Այս վերջինում ոչնչացվել է Հին Հայաստանի խոշորագույն մտածող Դավիթ Անհաղթի գերեզմանը:

Ավերված վանքային ճարտարապետական համալիրների ցանկը շատ երկար կարելի է շարունակել:

Վատ է Հայաստանի նվիրական մայրաքաղաք Անիի հուշարձանների վիճակը: Պատերի սրբատաշ քարերը 1950-ական թվականներին մոտակա թրքաբնակ գյուղի բնակիչների կողմից պոկվելու և իրենց շենքերը կառուցելիս օգտագործելու հետևանքով լրիվ ավերվեց եզակի երկհարկ կենտրոնագմբեթ Հովվի եկեղեցին, իսկ միջնադարյան Հայաստանի նշանավոր ճարտարապետ Տրդատի կառուցած Ս. Փրկիչ եկեղեցու ուղիղ կեսը փլվեց:

Թուրքական իշխանություններն այժմ նոր ռազմավարություն են որդեգրել՝ նենգափոխել փաստական տվյալները, հայ մշակույթից օտարել դեռևս, թեկուզ ավերակ, հուշարձանները: Անին զբոսաշրջության շնորհիվ մեծ եկամուտ է բերում Թուրքիային: Եվ տպագրված բազմալեզու ուղեցույցներում, հուշարձանների մոտ դրված բացատրագրերում կեղծված են պատմական, փաստական տվյալ-

---

[23] *Արևմտյան Հայաստանի հուշարձանների վիճակը 1915 թ-ից ի վեր.– «Վարձք», Երևան, 2010, - 2, էջ 2–64:*

ները: Օրինակ, Անի քաղաքը ներկայացվում է ոչ թե հայկական, այլ բյուզանդական, ապա սելջուկյան, հետո վրացական: Քաղաքի բոլոր աշխարհիկ կառույցները՝ Զաքարյան իշխանների երկհարկ պալատները, հյուրանոցը, քաղաքային բաղնիքը և այլն, ներկայացված են որպես «սելջուկյան», հայ մեծահարուստ Տիգրան Հոնենցի կառուցած շքեղ քանդաքազարդ եկեղեցին՝ որպես «վրացական» և այլն: «Հայ» և «հայկական» բառեր իսպառ չեն հանդիպում: Անիում վթարային վիճակում է համաշխարհային ճարտարապետության գլուխգործոց Տրդատի կառուցած Մայր տաճարը:

Արևմտյան Հայաստանում միակ կանգուն և պահպանված հուշարձանը Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին է (915–921 թթ., ճարտարապետ Մանվել), որի կոսմետիկ նորոգումը թուրքական իշխանությունները հանրությանը 2007 թ. ներկայացրեցին որպես «հոգատարություն» հայկական մշակույթի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության հարևան թուրքական մյուս պետության՝ Ադրբեջանի իշխանությունները, օգտվելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի, միջազգային մյուս համապատասխան կազմակերպությունների միանգամայն անտարբեր վերաբերմունքից, բացահայտորեն իրականացրեցին իրենց իշխանության տակ գտնվող հայկական պատմական տարածքների արվեստի ու ճարտարապետության հուշարձանների մշակութային եղեռնը: 1988 թ. վերջերից, Լեռնային Ղարաբաղի ազատագրման համար մղվող պատերազմի տարիներին, ադրբեջանցիները թնդանոթային ու տանկային համազարկերով, պայթեցումներով հիմնահատակ ավերեցին հյուսիսային Արցախի, Գանձակի 28 վանք ու եկեղեցի[24]:

Պատմական Հայաստանի Գողթան, Երնջակ, Ճահուկ գավառները Անդրկովկասում խորհրդային իշխանության հաստատվելուց հետո տրվեցին նորաստեղծ Ադրբեջանին՝ «Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն» անվամբ, ինչը ճակատագրական եղավ այդ գավառների հայ բնակչության և հայկական ճարտարապետության ու արվեստի հազարավոր հուշարձանների համար:

Ըստ 1986 թ. տվյալների՝ Նախիջևանի ԻՍՀՀ-ի տարածքում եղել է 200 վանք ու եկեղեցի, 60 մատուռ ու սրբավայր, 86 գերեզմանատուն՝ մոտ 23.000 տապանաքարերով ու խաչքարերով[25]: Միայն Ագուլիսում կայուն են եղել 12 եկեղեցի և Ս. Թովմա վանքի համալիրը[26]:

Խաչքարային բացօթյա եզակի «թանգարան» Ջուղայի գերեզմանոցը, որտեղ

---

[24] Ս. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հայկական պատմական հուշարձանների վիճակը Հայաստանի հարևան երկրներում.– Հայկական մշակութային ժառանգության պահպանությունը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում: Կլոր սեղան, Երևան-Օշական, 2008 թ. դեկտեմբերի 2 – 6, Երևան, 2009, էջ 88–91:

[25] Ա. Ա յ վ ա զ յ ա ն. Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները (համահավաք ցուցակ), Երևան, 1986, էջ 11:

[26] Նույն տեղում, էջ 20–33:

պահպանվել էին միջնադարյան մեմորիալ արվեստի ավելի քան 4000 կանգուն խաչքարեր, խոյաձև տապանաքարեր, ադրբեջանական իշխանությունները 2005 թ. բուլդոզերներով հիմնահատակ ավերել են, ջարդել հուշարձանները և լցրել Արաքս գետը[27]: Այս բոլորը Արաքսի՝ Ջուղայի դիմացի ափից, Իրանի տարածքից լուսանկարվել, տեսագրվել և ներկայացվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին, բայց՝ անհետևանք:

Ջուղայի գերեզմանոցի հազարավոր խաչքարերի ոչնչացումը ադրբեջանական իշխանությունների իրագործած մշակութային եղեռնի անմարդկային, սակայն միայն մեկ էպիզոդն է: Պարզվեց, որ միաժամանակ ոչնչացվել են Նախիջևանի ինքնավար հանրապետության տարածքի բոլոր *հայկական վանքերն ու եկեղեցիները: Այդ պատճառով էլ օտարազգիների մուտքը գրեթե երկու տասնամյակ փակ էր դեպի Նախիջևան: Միայն 2005 թ. անգլիացի հետազոտող Մթիվեն Սիմին հաջողվեց այցելել երբեմնի հայկական բնակավայրերը: Նրա հայտնած տեղեկությունները ցնցող էին: Նա Ապրակունիսում Սուրբ Կարապետ, Շոռոթում՝ Սուրբ Հակոբ Հայրապետ հայտնի վանքերի համալիրների տեղում տեսել է միայն բուլդոզերներով հարթեցված տարածքներ[28]:*

Նույն ճակատագրին են արժանացել Ագուլիսի եկեղեցիների հետ միասին Ս. Թովմա վանքը (Նաղաշ Հովնաթանյանի որմնանկարներով և արժեքավոր պատկերաքանդակներով), Յոնայի Ս. Աստվածածին, Մեսրոպավանի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Փառակայի Ս. Հակոբ Հայրապետ, Օծոփի Ս. Աստվածածին վանքերն ու բոլոր գյուղերի եկեղեցիները: Այդ ոճիրից հետո Ադրբեջանը հայտարարեց, որ Նախիջևանի տարածքում «հայկական հետք չկա և ընդհանրապես չի էլ եղել»:

Ամփոփելով պետք է ասել, որ Հայաստանի Հանրապետությանը հարևան այս երկու պետությունների իրագործած ճարտարապետական և մեմորիալ հայկական հուշարձանների զանգվածային *և* մեթոդավոր *ոչնչացումը, հիրավի, հանցագործություն է համաշխարհային քաղաքակրթության նկատմամբ:*

УНИЧТОЖЕНИЕ АРМЯНСКИХ АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКОВ ТУРКАМИ (XI–XX вв.)

МУРАД АСРАТЯН

Р е з ю м е

[27] Jugha. The Annihilation of the Armenian Cemetery by Nakhijevan's Azeri Authorities between 1998 and 2003, RAA, Beirut, 2006, pp. 3–15.

[28] *Ս. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 91–92:*

Одна из важнейших областей армянской культуры – архитектура, на протяжении веков несла огромные потери от вторгавшихся в Армению чужеземцев, в первую очередь, от турок, разрушивших в основном монастыри и церкви, многие из которых являлись шедеврами общехристианского искусства. Этот процесс достиг своей кульминации после Геноцида армянского народа, осуществленного в 1915 г. в Западной Армении властями Турции. Тогда были разграблены, сожжены и разрушены почти все монастыри и церкви, уничтожены хранимые там на протяжении веков бесчисленные сокровища армянской культуры. А в конце XX – начале XXI вв. властями другого соседнего турецкого государства – Азербайджана, было осуществлено тотальное уничтожение памятников архитектуры и искусства и даже древних кладбищ, находящихся на отошедших к ним исторических армянских территориях.

THE DEMOLITION OF ARMENIAN ARCHITECTURAL MONUMENTS BY THE TURKS (the 11th – 20th centuries)

MURAD HASRATYAN

Summary

One of the most important domains of Armenian culture – architecture, in the course of centuries suffered mostly from the foreign conquerors invading Armenia. The greatest injuries were inflicted by the Turks, who demolished the monasteries and churches of the country, many of which were masterpieces of the whole Christian culture. This process culminated after the Genocide of the Armenians in Western Armenia in 1915 by the Turkish authorities. At that time almost all the monasteries and churches were plundered, burnt and demolished, innumerable treasure - houses of Armenian culture, kept there for centuries were destroyed. At the end of the 20th – the beginning of the 21st centuries the authorities of another neighboring Turkish state – Azerbaijan, in 1985–2005, totally destroyed the relics of Armenian architecture and art on the lands under their rule.